ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ: ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

12.10.2017 15:57

Հարգելի փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ ՀՀ փաստաբանների պալատը ՌԴ փաստաբանների պալատի և Եվրոպայի խորհրդի HELP (Իրավունքի ոլորտի մասնագետների ուսուցում մարդու իրավունքների վերաբերյալ) ծրագրի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպում է վերապատրաստման դասընթաց՝ *«Ընտանեկան իրավունքը և մարդու իրավունքները: Երեխաների և մեծահասակների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները»* թեմայով: Դասընթացը կազմակերպվելու է 22.11.2017 թվականից մինչև 16.02.2018 թվականը: Դասընթացը անցկացվելու է ռուսերեն լեզվով, HELP հարթակի միջոցով (հեռավար ուսուցման եղանակով):

Դասընթանցին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի վերապատրաստման 40 ակադեմիական ժամ՝ համապատասխանաբար 2017 թվականի համար 20 և 2018 թվականի համար 20 ակադեմիական ժամ: Դասընթացի ավարտին փաստաբաններին տրվելու է մասնակցության վկայական:

Դասընթացին մասնակցության դիմումը ուղարկեք law.course@mail.ru հասցեին:

Կից ներկայացնում ենք մանրամասն տեղեկատվություն դասընթացի վերաբերյալ (օրակարգը), ինչպես նաև դիմումի ձևանմուշը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })